

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### «Յանուս ժողովրդավարութեան» Համաժողովը եւ Յունուար 6-ի Յանձնաժողովը

Անցեալ շաբաթ, Միացեալ Նահանգներու նախագահի Ծո Պայտըրնի հրաւերով տեղի ունեցաւ «Յանուս ժողովրդավարութեան» տեսակապով համաժողովը, որուն հրաւիրուած էին աշխարհի աւելի քան հարիւր երկիրներու ղեկավարները, որոնց շարքին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը: Քննարկումներու օրակարգին վրայ էին ժողովրդավարութեան դէմ սպառնալիքները դիմագրաւելու, քորուփցիայի դէմ պայքարին ու մարդու իրաւունքներու պաշտպանութեան վերաբերող հարցեր:

«Յանուս ժողովրդավարութեան» Համաժողովը տեղի կ'ունենար այն պահուն, երբ սեւ ամպեր կուտակուած են նոյնիմքն՝ Ամերիկայի ժողովրդավարութեան երկնքին, որոնք կը սպառնան այս երկրի ներկայիս ու ապագային:

Ներկայացուցիչներու Տան կողմէ կազմուած Յատուկ Յանձնաժողովը կը շարունակէ ստուգումները՝ բացայայտելու համար անցեալ Յունուար 6-ին, Գափիթուլի շէնքին վրայ կատարուած յարձակումին բոլորը ծալքերը ու այդ դէպքերու կազմակերպիչներն ու պատասխանատուները:

Յատուկ Յանձնաժողովը մինչեւ օրս ստացած է հազարաւոր փաստաթուղթեր ու լսած է հարիւրաւոր վկաներ եւ ձեռք ձգուած փաստերը կու գան ցոյց տալու թէ, նախկին նախագահ Տանուլտ Թրամփ ու իր անմիջական շրջապատը կարծուած են աւելի լայն միջամտութիւններ կատարած են ու ճնշումներ գործադրած՝ փորձելով շրջել նախագահական ընտրութիւններու արդիւնքները եւ մնալու աթոռին: Իսկ, Յունուար 6-ի իրադարձութիւնները չեն եղած ինքնաբոլիս, այլ ունեցած են կազմակերպուած բնոյթ՝ տապալելու համար այդ օրը Գոնկրէս երկու պալատներէն ներս տեղի ունեցող օրէնքով սահմանուած սահմանադրական գործընթացը՝ նոր նախագահի ընտրութիւնը հաստատելու համար:

Յարդ ձեռք ձգուած փաստերը կ'երթան այն ուղղութեամբ, որ Թրամփ ոչ միայն մասնակից եղած է Յունուար 6-ի յարձակումի նախապատրաստական աշխատանքներուն, այլ եւ նպատակ ունեցած է իրականացնելու յեղաշրջում:

Նախկին նախագահի բազմաթիւ օգնականներ, գլխաւորու-

### Պրիւքսէի Սէջ Կայացաւ Փաշինեան-Ալիւի-Միշել Եռակողմ Հանդիպումը

Դեկտեմբեր 14-ին Պրիւքսէի մէջ կայացաւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի, Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիւեւի հանդիպումը՝ մասնակցութեամբ Եւրոպական Խորհուրդի նախագահ՝ Շառլ Միշելի հանդիպումը:

Նախքան եռակողմ հանդիպումը, Շառլ Միշել առանձին խորհրդակցութիւններ ունեցաւ Ատրպէյճանի եւ ապա Հայաստանի ղեկավարներուն հետ:

Ատրպէյճանի նախագահը եռակողմ հանդիպումէն առաջ դարձեալ խօսեցաւ «Զանգեզուրի Միջանցքի» մասին:

ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղար՝ Եննա Սթոլթենպըրկի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ, պատասխանելով «Ազատութիւն» ռատիոկայանի հարցին, Ատրպէյճանի նախագահը անդրադարձաւ «Զանգեզուրի միջանցքին»՝ յայտարարելով, թէ ան «պէտք է գործէ Լաչինի միջանցքին պէս»:

««Զանգեզուրի միջանցքի» բացման մասին կէտը նախատեսուած է Ատրպէյճանի, Ռուսաստանի եւ Հայաստանի ղեկավարներու 2020 թուականի Նոյեմբեր 10-ի եռակողմ յայտարարութեամբ: Այդպիսով, սա պարտաւորութիւն է Հայաստանի համար», - յայտարարեց Ալիւեւ՝ շարունակելով. «Եռակողմ յայտարարութիւններուն մէջ բացայայտ ըսուած է, որ Ատրպէյճանի կ'ապահովէ անվտանգութիւն եւ մուտք դէպի Լաչինի միջանցք: Հայաստանը պէտք է մեզի նոյն



Պրիւքսէի մէջ կայացած Փաշինեան-Ալիւի-Միշել եռակողմ հանդիպումը

անարգել մուտքը տայ դէպի Զանգեզուրի միջանցք: Այսօր Լաչինի միջանցքը չկան մաքսակէտեր: Նոյնը պէտք է ըլլայ նաեւ Զանգեզուրի միջանցքը: Եթէ Հայաստանը պնդէ, որ մաքսակէտեր ստեղծելու համար վերահսկել ապրանքներու եւ քաղաքացիներու տեղաշարժը «Զանգեզուրի միջանցքով», ապա այն ժամանակ մենք պիտի պնդենք Լաչինի միջանցքի մէջ նոյն պայմանները: Սա տրամաբանական է»:

Ատրպէյճանի նախագահը նշած է, որ «պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է կառուցելու ճանապարհներ դէպի Նախիջևան»:

«Բայց ճշգրիտ երթուղին, ճանապարհը դեռ որոշուած չէ, սա

ապագայ բանակցութիւններու հարց է: Այսօր եռակողմ հանդիպման մենք անպայման կը քննարկենք այդ հարցը», - աւելցուցած է Իլհամ Ալիւեւ:

««Զանգեզուրի միջանցքը» միջանցք է ոչ միայն մեզի համար: Ատրպէյճանը մուտք կը ստանայ դէպի Նախիջևան: Ան անհրաժեշտ է նաեւ Հայաստանին իրանի եւ Ռուսաստանի հետ Ատրպէյճանի տարածքով երկաթուղային հաղորդակցութեան համար: Այնպէս որ, այդ իսկապէս դրական միջնորոտ կը ստեղծէ», - պնդած է Ատրպէյճանի ղեկավարը:

### Պայտըն Կոչ Ըրած է Էրտողանին՝ Բանալու Հայաստանի Հետ Սահմանը



ԱՄՆ-ի եւ Թուրքիոյ նախագահներ՝ կայացած հանդիպումի ընթացքին Պայտըն եւ Էրտողան Հոնոլուի մէջ

Հայաստան ու Թուրքիա յատուկ բանագնացներ կը նշանակեն, որոնք պիտի քննարկեն յարաբերութիւններու կարգաւորման ուղղուած քայլերը: Այս մասին յայտարարած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաւուշօղլուն՝ աւելցնելով, որ երկիրները կը վերսկսին թռիչքներ Պոլսոյ եւ

Երեւանի միջեւ:

Ելուցիք ունենալով խորհրդարանէն ներս արտաքին գործոց նախարարութեան պիւլտօձէի քննարկման ժամանակ՝ Չաւուշօղլուն ըսած է, որ Թուրքիան Ատրպէյճանի հետ կը համակարգէ Հա-

### Փութին եւ Մաքրոն Քննարկած են Ղարաբաղեան Իրադրութիւնը

Հեռախօսազրոյց ունեցած են Ռուսաստանի եւ Ֆրանսայի նախագահները: Ըստ Քրեմլինի տարածած հաղորդագրութեան՝ վլատիմիր Փութին եւ էմանուէլ Մաքրոն ի թիւս այլ հարցերու, մանրամասն քննարկած են նաեւ Լեւնային Ղարաբաղի հակամարտութեան իրադրութիւնը:

Հաղորդագրութեան համաձայն՝ Փութին ֆրանսացի պաշտօնակիցին ներկայացուցած է 2021 թուականի Նոյեմբեր 26-ին Սոչի կայացած Ռուսաստանի, Ատրպէյճանի եւ Հայաստանի ղեկավարներու եռակողմ հանդիպման հիմնական արդիւնքները:

«Պատմած է, թէ ինչպէս տարածաշրջանին մէջ կ'ընթանան հրադադարի պահպանման, փախստականներու վերադարձի, առեւտրատնտեսական եւ փոխադրային կապերու վերականգնման իրագործման ուղղուած քայլերը», - հաղորդած է Քրեմլինի մամուլի ծառայութիւնը:



ԼՈՒՐԵՐ

Կալանաւորուած են Զինուած Ուժերու Բարձրաստիճան Սպաներ

Կալանաւորուած են Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան եւ Զինուած ուժերու բարձրաստիճան սպաներ, յայտնած է Քննչական կոմիտէին:

Ըստ հաղորդագրութեան, նախարարութեան N գործառնարի թիկունքի պետ-հրամանատարի թիկունքի եւ համայնքային շահագործման ծառայութեան գծով տեղակալ, գնդապետ Ա.Կ.-ը 2021-ի Յուլիսին, նոյն գործառնարի իրաւի ծառայութեան պետ, փոխգնդապետ Տ.Պ.-ի հետ նախնական համաձայնութիւն ձեռք բերած է յափշտակելու նոյն գործառնարի հաշուեկշռին մէջ գտնուող զինուորական նշանակութեան N տեսակի 6 հատ չօգտագործուած վրանները:

Այդ նպատակով, ըստ կոմիտէին, Ա.Կ.-ն եւ Տ.Պ.-ն յիշեալ 6 վրանները հաշուառած են 44-օրեայ պատերազմի հետեւանքով անվերադարձ կորսուած, արհեստականօրէն առաջացուցած են տուեալ ապրանքներու աւելցուկ՝ այդ եղանակով յափշտակելով ընդհանուր 6 միլիոն 726 հազար դրամ արժողութեամբ վերոնշեալ վրանները:

Այնուհետեւ, ըստ Քննչական կոմիտէին, Ա.Կ.-ն եւ Տ.Պ.-ն յանցաւոր համաձայնութիւն ձեռք բերած են յափշտակուած վրանները Պաշտպանութեան նախարարութեան վաճառելու վերաբերեալ եւ Ա.Կ.-ն իր հերթին նախնական համաձայնութիւն ձեռք բերած է ՀՀ ԶՈՒ գլխաւոր շտապի թիկունքի վարչութեան իրաւի ծառայութեան պետ, գնդապետ Ա.Թ.-ի հետ:

Վերաքննիչ Դատարանը Մերժեց «Սասնա Շռերու» Բողոքները

Վերաքննիչ քրէական դատարանը վճռեց մերժել «Սասնա Շռերու» 9 անդամներու բողոքները:

Դատարանը մասնակի բաւարարեց դատախազութեան բողոքը՝ Արմէն Պիլեան դատապարտեցաւ 25 տարուայ ազատազրկման եւ դատարանի դահլիճէն ներս կալանաւորուեցաւ:

Ոստիկանութեան պարեկապահ կէտային ծառայութեան (ՊՊԾ) գունդի գրաւման համար շարք մը յօդուածներով դատապարտուած խումբի անդամները կը պահանջէին կա՛մ արդարացնել իրենց, կա՛մ գործը նոր քննութեան ուղարկել:

Փետրուարին առաջին ատենադատարանը «Սասնայ Շռերու» 9 առանցքային անդամներուն մեղաւոր գտաւ շարք մը յօդուածներով, անոնց շարքին՝ շէնքեր-չինութիւններ գրաւելու համար, անոնք դատապարտուած են 6-էն 8 տարուայ

ազատազրկման: Ամենածանր վճիռը կայացուած էր Սմբատ Բարսեղեանի նկատմամբ՝ ան 25 տարուայ կալանքի դատապարտուած է երկու ոստիկաններու՝ Ետրի Տեփանոսեանի եւ Արթուր Վանոյեանի մահուան համար: Բարսեղեանէն գատ, միւս բոլոր ամբաստանեալներն ազատութեան մէջ են, քանի դեռ չէ աւարտած բողոքներու քննութիւնը:

Երրորդ ոստիկանի՝ Գագիկ Մկրտչեանի սպանութեան համար մեղադրուող Արմէն Պիլեան առաջին ատենադատարանը շարք մը բաւարար ապացոյցներու բացակայութեան հիմքով: Դատախազութիւնը պահանջած էր վերանայիլ այդ որոշումը:

Դատախազութիւնը պահանջած էր նաեւ կալանաւորուած Սմբատ Բարսեղեանի պատիժը խստացնել՝ դատապարտելով ցմահ ազատազրկման:

Դատարանը Բաւարարած է Հայաստան Վերադարձուած Գերիներէն Երկուքի Կալանաւորման Միջնորդութիւնը

Օրերս Հայաստան վերադարձած տասը գերիներէն հինգին մեղադրանք առաջադրուած է մարտական հերթապահութիւն կամ մարտական ծառայութիւն կրելու կանոնները խախտելու յօդուածով: Այս արարքը կը պատժուի երեքէն ութ տարի ազատազրկմամբ:

Դեկտեմբեր 4-ին Հայաստան վերադարձուած գերիներէն երկուքը՝ պայմանագրային զինծառայողներ, դատարանի որոշմամբ կալանաւորուած են: Ինչպէս «Ազատութիւն»-ին հաղորդեցին նախկին գերիներու պաշտպանները, դատարանը մերժած է գործառնարի գումարտակի հրամանատարի տեղակալ, մայր Նարեկ Երեմեանի կալանաւորման միջնորդութիւնը:

Զինծառայողներէն երկուքի կալանքի հարցը դատարանը դեռ կը քննէ: Մեղադրեալի կարգավիճակ ունեցող զինծառայողները գերեզմարուած էին Նոյեմբեր 16-ին՝ Սիւնիքի ու Վայոց Ձորի սահմանագոտիէն ներս ծաւալուած արիւնայի մարտերու օրը: Այդ օրը հայկական կողմը երկու դիրք կորսնցուցած էր: Աւելի վաղ այս գործի ծիրէն ներս կալանաւորուած էին կորսուած դիրքի երկու պատասխանատուները՝ մարտական ծառայութեան կանոնները խախտելու մեղադրանքով:

Սիւնիքի ու Վայոց Ձորի սահմանագոտիէն ներս ծաւալուած արիւնայի մարտերու օրը: Այդ օրը հայկական կողմը երկու դիրք կորսնցուցած էր: Աւելի վաղ այս գործի ծիրէն ներս կալանաւորուած էին կորսուած դիրքի երկու պատասխանատուները՝ մարտական ծառայութեան կանոնները խախտելու մեղադրանքով:

Կալանք Դրուած է Սէյրան Օհանեանի Եւ Անոր Կնոջ Գոյքին Վրայ

Ապօրինի գոյքի բռնագանձման գործերով դատարանը կալանք դրած է շարք մը նախկին բարձրաստիճան պաշտօնեաներու եւ անոնց մերձաւորներու գոյքին վրայ՝ բաւարարելով դատախազութեան միջնորդութիւնը, տեղեկացուցած են դատախազութեան:




Պաշտպանութեան Գախկին Գախարար, պատգամաւոր Սէյրան Օհանեանի դղեակը Վահագն թաղամասին մէջ

Գլխաւոր դատախազութիւնը ուսումնասիրած է Պաշտպանութեան նախկին նախարար, «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Սէյրան Օհանեանի, անոր կնոջ՝ Ռուզաննա Խաչատրեանի, անոր առնչուող անձի՝ Ժաք Ֆովոյի, Սերժ Սարգսեանի թիկնազօրի նախկին պետ՝ Վաչական Ղազար-

եանի, անոր կնոջ, դստեր, որդւոյն ձեռք բերած գոյքի օրինականութիւնը եւ միջնորդած կալանք դնել անոնց գոյքերուն վրայ, որ բաւարարուած է:

Արմաւիրի Մէջ Յայտնաբերուած է Ամբողջ Զինանոց Մը



Ոստիկանութեան յայտնաբերած զինանոցը՝ Արմաւիրի մէջ

Ոստիկանութեան Արմաւիրի բաժնի ծառայողները օփերաթիւ հետախուզական ծաւալուն միջոցառումներու շնորհիւ հաւաստի տեղեկութիւն ձեռք բերին, որ Այգեշատ գիւղի բնակիչ, 19-ամեայ երիտասարդ մը ինքնաշարժին մէջ հրազէն կը պահէ:

Դեկտեմբեր 10-ին ան յայտնաբերուեցաւ ու ինքնաշարժով հանդերձ, բերման ենթարկուեցաւ բաժին: Չննութեամբ ինքնաշարժի բեռնախցիկը յայտնաբերուեցաւ գործարանային համարով «Քալաշնիքովի» ինքնաձիգ: Դէպքի առթիւ քրէական գործ յարուցուեցաւ: Երիտասարդը ձերբակալուեցաւ: Յարուցուած քրէական գործի ծիրէն ներս խուզարկուեցան նաեւ երիտասարդի կողմէ շահագործուող

միւս ինքնաշարժը ու բնակարանը, ինքնաշարժին մէջ յայտնաբերուեցան գործարանային համարով «Քալաշնիքովի» ինքնաձիգ, պայթուցիչով նռնակ, պայթուցիչներ, ինքնաձիգի պահուանակներ, որոնցմէ մէկը մէկը լիցքաւորուած էր 17 փամփուշտով, տարբեր տրամաչափի եւ հրազէններու 2000-էն աւելի փամփուշտ եւ այլն:

Բնակարանի խուզարկութեամբ եւս գործարանային համարով «Քալաշնիքովի» ինքնաձիգ յայտնաբերուեցաւ, ինչպէս եւ թմբուկաւոր ատրճանակ, ինքնաձիգի պահուանակներ, որոնցմէ մէկը լիցքաւորուած էր 26, միւսը՝ 30 փամփուշտով: Օփերաթիւ-հետախուզական միջոցառումները շարունակուեցան: Արմաւիրի ոստի-

ՍԴ-ն Վճռած Է՝ Անագատութեան Մէջ Գտնուող Պատգամաւոր Դառնալէն Յետոյ Պէտք Է Ազատ Արձակուի

Սահմանադրական դատարանը (ՍԴ) Դեկտեմբեր 10-ին հրապարակած որոշումով վճռած է, որ անագատութեան մէջ գտնուող անձը պատգամաւորի կարգավիճակ ստանալէն յետոյ չի կրնար պահուիլ անագատութեան մէջ: Ամիսներ առաջ այս հարցը ճշգրտելու համար Բարձր դատարան դիմած էին ընդդիմադիր պատգամաւորները՝ իրենց գործընկերներուն՝ «Հայաստան» դաշինքի կալանաւորուած պատգամաւորներ՝ Արմէն Զարչեանի, Միսիթար Զաքարեանի եւ Արթուր Սարգսեանի հարցով:

Երեքին ալ իրաւապահները մեղադրանք առաջադրած են եւ կալանաւորած պատգամաւոր ընտրուելէն առաջ: Ընդդիմադիրներու պաշտպանները բազմիցս յայտա-

րարած են, որ պատգամաւոր ընտրուելէն յետոյ անոնք պէտք է կալանքէն ազատ արձակուէին պատգամաւորական անձեռնմխելիութիւն ձեռք բերելու շնորհիւ:

Բարձր դատարանը որոշած է, որ պատգամաւորի կարգավիճակ ձեռք բերելու պահուն անձը, բացառութեամբ Սահմանադրութեան 96-րդ յօդուածի 2-րդ մասով նախատեսուած դէպքերուն, չի կրնար գրկուիլ ազատութենէն այլ կերպ, քան Ազգային ժողովի համաձայնութեամբ: Սահմանադրութեան նշուած յօդուածի համաձայն՝ պատգամաւորի անձեռնմխելիութեան հարցը չի քննարկուիլ, եթէ ան բռնուած է յանցանք կատարելու պահուն կամ անմիջապէս անկէ ետք:

բերման ենթարկուեցաւ բաժին ու ձերբակալուեցաւ:

Անոր բնակարանի խուզարկութեամբ յայտնաբերուեցաւ ապօրինի պահուող գործարանային համարով հրացան:

Հանգամանքները կը պարզուին:

# ԼՈՒՐԵՐ

## Հայաստան Շահագրգռված է Բոլոր Տնտեսական Եւ Փոխադրային Կապերու Բացումով. Նիկոլ Փաշինեան

Հայաստանի Հանրապետութիւնը պատրաստ է եւ շահագրգռուած է տարածաշրջանի բոլոր տնտեսական եւ փոխադրային կապերու բացումով: Ինչպէս տեղեկացուցած է «Արմէնփրէս»-ը, Ազգային ժողովէն ներս կառավարութեան անդամներէն ուղղուած հարցու պատասխանի ժամանակ ըսաւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան, պատասխանելով «Պատիւ ունե՞մ» խմբակցութեան պատգամաւոր Աննա Մկրտչեանի հարցին՝ Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան՝ հաղորդակցութիւններու ապաշրջափակման վերաբերեալ: Մկրտչեան վարչապետին հարցուց, թէ արդեօք Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան 9-րդ կէտը միջանցքի բաղադրիչներ չի պարունակեր:


«Մեր բոլոր մեկնաբանութիւնները մանրամասն ձեւակերպուած է Արտաքին գործոց նախարարութեան Դեկտեմբերի 7-ի մեկնաբանութեան մէջ: Հիմա հարցի էութիւնը որն է, ուզում էք ստանաք պատասխան՝ մենք միջանցքի վերաբերեալ ունենք պայմանաւորուածութիւն, թէ՞ դուք ուզում էք միջանցքի վերաբերեալ պայմանաւորուածութիւն ունենանք: Ես ձեր ասած մեկնաբանութիւնների հետ համաձայն չեմ», - ըսաւ Փաշինեան:

Վարչապետը նաեւ անդրադարձաւ պատգամաւորի այն դիտարկման, թէ Հայաստանի Հանրապետութեան հաշտոյն ճանապարհ կը տրուի: Փաշինեան կրկին պնդեց,

որ Հայաստանի Հանրապետութիւնը պատրաստ է եւ շահագրգռուած է տարածաշրջանի բոլոր տնտեսական եւ փոխադրային կապերու բացումով այն ընկալմամբ, որ, Ատրպէյճանը պէտք է երկաթուղային եւ ցամաքային հաղորդակցութիւն ստանայ Նախիջևանի հետ Հայաստանի Հանրապետութեան տարածքով, Հայաստանի Հանրապետութիւնն ալ Ատրպէյճանի տարածքով երկաթուղային կապ ստանայ դէպի Իրանի Իսլամական Հանրապետութիւն եւ Ռուսաստանի Դաշնութիւն, ինչպէս նաեւ ցամաքային հաղորդակցութիւն Ատրպէյճանի տարածքով դէպի Ռուսաստանի Դաշնութիւն:

«Կարծում ենք՝ պէտք է գնանք այս տրամաբանութեան լուծումների եւ կարծում ենք, որ այն ինչ որ մենք առաջարկում ենք եւ այն ինչ արձանագրել ենք երէկ արտաքին գործոց նախարարութեան յայտարարութեան մէջ լիարժէք համապատասխանում է մեր երկրի շահերին: Նախկինում ասել եմ, որ չեմ հասկանում այն հետեւորաբանութիւնը, որ մեր բոլոր ճանապարհները պէտք է փակ լինեն, որպէսզի ոչ մէկ մեր ճանապարհով չանցնի, որովհետեւ, ընդհակառակը, այդ տրամաբանութիւնը միշտ առաջ են քաշել նրանք, ովքեր ցանկացել են, որ Հայաստանով տարանցութիւն չլինի, Հայաստանի փոխադրային ուղիները փակ լինեն եւ այդպէս շարունակ», - եզրափակեց Փաշինեան:

## Մոսկուայի Մէջ Կայացած Է «3+2» Ձեւաչափի Առաջին Նիստը՝ Փոխ Արտաքին Գործոց Նախարարներու Մակարդակով



Մոսկուայի մէջ Դեկտեմբեր 10-ին տեղի ունեցած է տարածաշրջանային համագործակցութեան նոր ձեւաչափի՝ «3+2» եւ ինչպէս աւելի վաղ Ռուսաստանի Արտաքին գործոց նախարարութիւնը ձեւակերպած էր, «խորհրդատուական» հարթակի առաջին նիստը, որուն մասնակից երկիրները ներկայացուած են փոխ արտաքին գործոց նախարարներու մակարդակով:

Այս նոր հարթակին իրականութեան մէջ պէտք է վեց մասնակիցներ ըլլային, եւ այն կոչուէր «3+3»: Վրաստանը, սակայն, հրաժարած է մասնակցելէ նիստին, յայտարարելով, թէ նախապէս արդէն պարզաբանած էր, որ հարթակին չի միանար Ռուսաստանին հետ հակասութիւններու պատճառով:

«Մենք չենք դիտարկեր մեր մասնակցութիւնը ստույգ ձեւաչափին ներս, հետեւաբար՝ Վրաստանը ներկայացուած է ընթացիկ տարուայ Դեկտեմբեր 10-ին ծրագրուած հանդիպման», - ընդգծած է Վրաստանի արտաքին գործոց նախարարութիւնը:

Պաշտօնական թիֆլիսը մերժած է նախաձեռնութիւնը՝ նշելով, թէ չի կրնար համագործակցիլ Հարաւային Օսեթիան եւ Աբխազիան գրաւած Քրեմլինին հետ:

Պաշտօնական Երեւանը յայտարարած է, որ կը միանայ հարթակին, սակայն ընդգծած, թէ այդ ձեւաչափը պէտք է ներառէ հարցեր, որոնք արդէն համաձայնեցուած են կամ քննարկուած ուրիշ հարթակներով, անոնց կարգին՝ Լեռնային Ղարաբաղի խնդիրը:

Ռուսաստանի փորձագէտներու կարծիքով՝ «3+3» հարթակը, որու ձեւաչափի, գործառնութիւններու եւ իրական նպատակներու մասին շատ բան յայտնի չէ, այդուամենայնիւ, ձեռնտու է տարածաշրջանի բոլոր երկիրներուն, անոնց կարգին՝ Հայաստանին:

## Նիկոլ Փաշինեան Մասնակցացաւ «Յանուն Ժողովրդավարութեան» Համաժողովի Բացման



Վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռակապով կը մասնակցի «Յանուն Ժողովրդավարութեան» համաժողովին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան մասնակցեցաւ «Յանուն Ժողովրդավարութեան» համաժողովի բացման, որ կայացած է առցանց, յայտնուած է Հայաստանի կառավարութիւնը:

Համաժողովի բացման ելուցթով հանդէս եկած է ԱՄՆ-ի նախագահ՝ Ժո Պայտըն, որմէ յետոյ մեկնարկած են տեսակապով քննարկումները:

Ժողովրդավարութեան համաժողովը կազմակերպուած էր Ժո Պայտընի նախաձեռնութեամբ:

Երկօրեայ միջոցառման կը մասնակցէին աւելի քան հարիւր երկրի առաջնորդներ եւ ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ հասարակական կազմակերպութիւններու, մասնաւոր հատուածի ներկայացուցիչներ:

Քննարկումներու օրակարգին վրայ էին՝ Ժողովրդավարութեան դէմ սպառնալիքները դիմադրաւելու, քորուփցիայի դէմ պայքարին ու մարդու իրաւունքներու պաշտպանութեան վերաբերող հարցեր:

Համաժողովի երկրորդ օրը Նիկոլ Փաշինեան հանդէս եկաւ ելուցթով:

Իր ելուցթին մէջ Փաշինեան նշեց, որ Ժողովրդավարութեան համար Հայաստան պայքարած է իր ժամանակակից պատմութեան ամբողջ ընթացքին, իսկ մասնաւորապէս վերջին 3 տարիներուն հայերը ընտրած են Ժողովրդավարութիւնը մենատիրութեան փոխարէն 2 անգամ:

«Յառաջ բերելով թափանցիկութիւնն ու հաշուետուողականութիւնը՝ մենք կը ծրագրենք կառավարման բարեփոխումներ եւ այնպիսի քաղաքականութիւններու իրականացում, որոնք պիտի ձեւաւորեն հաւատք ինչպէս Հայաստանի մէջ, այնպէս ալ արտերկրի մեր գործընկերներուն մօտ, նշեց Փաշինեան աւելցնելով, որ Ժողովրդավարութիւնը ամրապնդելու ջանքերուն մէջ կան բազմաթիւ մարտահրաւէրներ, որոնցմէ ամենամեծը՝ անվտանգութեան սպառնացող ռազմական բնոյթի սպառնալիքներն են:

## Յեղասպանութեան Գնահատման Բանաձեւի Համահեղինակ, Ծագումով Թուրք Օգտեմիր՝ Գերմանիոյ Գիւղատնտեսութեան Նախարար

Գերմանիոյ նոր կառավարութեան գիւղատնտեսութեան նախարարի պաշտօնը կը գրաւէ ձէմ Օգտեմիրը՝ դառնալով դաշնային կառավարութեան ներգաղթեալի անցեալ ունեցող առաջին նախարարը:

Ծագումով թուրք քաղաքական գործիչը կանաչներու կուսակցութեան առաջնորդներէն է, ծնած է 1965-ին անատոլիական Թոքատ քաղաքը: 60-ականներու վերջաւորութեան ան ծնողներուն հետ փոխադրուած է Գերմանիա եւ համալսարանական կրթութիւն ստանալէն յետոյ սկսած է զբաղիլ քաղաքականութեամբ:

Օգտեմիրը Գերմանիոյ խորհրդարանի կողմէ ընդունուած՝ Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւի համահեղինակներէ է, 2015 թուականին Մեծ Եղեռնի 100-ամեայ տարելիցի նախօրէին Երեւան էր, ուր այցելած էր նաեւ Միջեռնակաբերդի յուշահամալիր: Գերմանացի քաղաքական գործիչը յայտնի է թուրքիոյ նախագահ՝ Ռէճեփ Էրտողանի հասցէին կոշտ քննադատութեամբ:

Գերմանիոյ կողմէ Հայոց ցեղասպանութեան ընդունումէն յետոյ էրտողան գերմանաբնակ թուրքերուն կոչ ըրած էր առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն չքուէարկելու Օգտեմիրի կուսակցութեան օգտին՝ քաղաքական ուժի ներկայացուցիչները որակելով «Թուրքիոյ թշնամիներ»:



Գերմանիոյ գիւղատնտեսութեան նախարար Դեմ Օգտեմիր

«Եթէ էրտողանը խորհուրդ չի տար քուէարկել մեր օգտին, կը նշանակէ, որ ձիւղ ուղիի վրայ ենք: Մեզ համար պատիւ է այդ ցուցակին վրայ ըլլալը», - ի պատասխան յայտարարած էր Օգտեմիրը:

# Հայաստանի Մեջ Շուտով Կը Բացուի HARD ROCK CAFE YEREVAN-Ը



Hard Rock Cafe Yerevan-ի ներկայացուցիչները կը խօսին իրենց ծրագիրներու մասին

Hard Rock-ը յայտարարած է ընկերութեան՝ Հայաստանի մէջ առաջին մասնաճիւղի բացման մասին: Hard Rock Cafe Yerevan-ը կը բացուի 2022-ին:

Աւելի քան 2800 տարուայ պատմութիւն ունեցող Երեւանը իր հազարամեայ մշակութային եւ պատմական ժառանգութեամբ նաեւ ժամանակակից եւ առաջադէմ մայրաքաղաք է Եւրոպայի եւ Ասիոյ, Արեւելքի եւ Արեւմուտքի խաչմերուկին վրայ:

Hard Rock Cafe Yerevan-ը պիտի գտնուի Երեւանի պատմական եւ զբօսաշրջային կեդրոնը: Հանրապետութեան հրապարակը՝ Պատմութեան թանգարանով, Կառավարութեան շէնքով եւ բազմաթիւ հիւրանոցներով, Հիւսիսային պողոտան՝ շքեղ խանութներով, սրճարաններով եւ ակումբներով, ընդամենը քանի մը քայլ հեռաւորութեան վրայ պիտի ըլլան սրճարանէն:

րանէն: Hard Rock Cafe Yerevan-ը իր տեսակի մէջ առաջինն է: Սրճարանը ունի ժամանակակից ներքին ձեւաւորում: Այն իւրօրինակ վայր է այցելուներու համար, որոնք կը ցանկան տարբերուող նկարներով հարստացնել ինստակրամեան իրենց էջը:

Hard Rock Cafe Yerevan-ը հասցնէ է Պուշկին 3-1, իւրապատուկ ճարտարապետական ոճ ու պատմութիւն ունեցող շէնքին մէջ: 1000 քմ տարածք զբաղեցնող սրճարանը կրնայ միեւնոյն ժամանակ ընդունել 290 հիւր:

Երկարկանի սրճարանը պիտի ունենայ փակ եւ բացօթեայ սրահներ: Առաջին յարկ գտնուող փակ սրահին մէջ տեղացի հիւրերը եւ Երեւանի այցելուները կրնան իրենց երեկոն անցընել՝ վայելելով կենդանի կատարմամբ որակեալ համերգներ:

## Պրիքսէլի Մեջ Կայացաւ

Շարունակուած է 1-էն

«Ատրպէյճանը փորձում է փակուող մտցնել տարածաշրջանային հաղորդակցութիւնների բացման հարցը», - դիմատետրեան գրառումով արձագանգեց Հայաստանի վարչապետը՝ շարունակելով. «Ատրպէյճանի նախագահի փորձերը տարածաշրջանային հաղորդակցութիւնների բացումը

գուզահեռել Լաչինի միջանցքի հետ՝ որեւէ աղբիւր չունի մինչ օրս այդ թեմայով տեղի ունեցած քննարկումների, ստորագրուած յայտարարութիւնների հետ եւ անընդունելի է Հայաստանի համար»:

Փաշինեան ընդգծած է, որ այս դիրքորոշումը յստակ կ'արտայայտէ կայանալիք եռակողմ հանդիպման ընթացքին:

## Պայտըն Կոչ Ըրած է Երտողանին

Շարունակուած է 1-էն

յաստանի հետ յարաբերութիւններու կարգաւորման քայլերը:

Հայաստանի հետ յարաբերութիւններու կարգաւորման ուղղութեամբ յստակ քայլեր ձեռնարկելու Անգարայի յայտարարութեան ֆոնին ամերիկեան Bloomberg պարբերականը ուշադրաւ մանրամասնութիւններ հաղորդած է այս գործընթացին ԱՄՆ-ի նախագահ Ջո Պայտընի դերին մասին:

Պարբերականը, հիմնուելով թուրք բարձրաստիճան պաշտօնեային ստացած տեղեկութեան վրայ, գրած է, թէ Հոկտեմբերի վերջին, Հոմի մէջ G20-ի ծիրէն ներս կայացած էրտողան-Պայտըն հանդիպման ժամանակ, ԱՄՆ-ի նախագահը թուրք պաշտօնակիցին կոչ ըրած է բանալու դէպի ծով ելք չունեցող Հայաստանի հետ սահմանը:

Bloomberg-ը գրած է. - «Անգարան յոյս ունի, որ հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորումը կը նպաստէ Ուաշինկթընի հետ յարաբերութիւններու բարելաման, որոնք լարուած շրջան կ'ապրին ռուսական հակաօդային պաշտպանական համակարգերու գնման պատճառով»:

«Ձեզի հետ երկու լուրով կ'ուզեմ կիսուել: Հայաստանի հետ յարաբերութիւններու կարգաւորման ուղղուած քայլերու ծիրէն ներս շուտով փոխադարձաբար յատուկ ներկայացուցիչներ կը նշանակուին: Մեր ամէն մէկ քայլով առաջ պիտի շարժինք Ատրպէյճանի հետ միասին: Բացի այդ, առաջիկային Սթամպուլ-Երեւան չարթերային թռիչքներ պիտի գործարկուին», - յայտարարած է ան: Թուրքիոյ արտաքին գերատեսչութեան ղեկավարը, սակայն,

# Լրագրողական Կազմակերպութիւնները Կը Դատապարտեն Լրագրող Թաթուլ Յակոբեանի Դէմ Արշաւը

Աշխատանքային ուղեւորութեամբ ԱՄՆ գտնուող լրագրող թաթուլ Յակոբեան ահազանգած է, որ իր հասցէին սպառնալիքներու, հաշուեյարդարի, նոյնիսկ կեանքէն զրկելու կոչեր հնչած են: Ըստ Յակոբեանին՝ այդ արշաւը կ'ուղղորդուի Հայաստանէն եւ ԱՄՆ հայկական որոշ շրջանակներէն, իսկ սպառնալիքներու առիթը, ըստ լրագրողին, վերջերս հրապարակայնօրէն արտայայտած իր հետեւեալ միտքն է. «Հայաստանն այնտեղ է, որտեղ կանգնած է հայ գինուորը»:



Լրագրող՝ Թաթուլ Յակոբեան

Այս փաստին վրայ լրագրողը յատկապէս հրաւիրած է իրաւապահ մարմիններու, լրագրողական կազմակերպութիւններու, Մարդու իրաւունքներու պաշտպանի, ՀՀ-ի մօտ ԱՄՆ դեսպանատան ուշադրութիւնը: Ան խոստացած է Հայաստան վերադառնալուն պէս իր դէմ արշաւի վերաբերեալ անուններ եւ փաստեր ներկայացնել: Այս պահուն լրագրողը կը գտնուի ԱՄՆ-ի ոստիկանութեան ուժերու պաշտպանութեան ներքոյ:

Հայաստանի շարք մը լրագրողական կազմակերպութիւններ համդէս գալով միատեղ յայտարարութեամբ կը յայտնեն.

«Տեղի ունեցածը եւս մէկ անգամ վկայում է, որ թէ՛ քաղաքական շրջանակներում, թէ՛ հայ հասարակութեան մէջ չի ձեւաւորուել քաղաքակիրթ բանավէճի մշակույթ, իսկ Արցախեան 44-օրեայ պատերազմից յետոյ ծայրաստիճան սրուած անհանդուրժողականութիւնը այլակարծութեան նկատմամբ խորանում է:

«Անկախ նրանից՝ որեւէ մէկին դուր են գալիս թաթուլ Յակոբեանի մտքերն ու վերլուծութիւնները, թէ՛ ոչ, նա հայ լրագրութեան լաւագոյն ներկայացուցիչներից մէկն է, որը խորապէս ուսումնասիրել է Արցախեան խնդիրը եւ խիզախօրէն լուսաբանել է այն, այդ թուով՝ ռազմական գործողութիւնների առաջնագծից: Որպէս լրագրող,

վերլուծաբան եւ քաղաքացի՝ նա իրաւունք ունի ազատօրէն կարծիք արտայայտել, եւ դրա համար իր եւ առհասարակ ցանկացած անձի հասցէին սպառնալիքներ ու կեանքից զրկելու կոչեր ուղղելը քրէօրէն պատժելի արարք է:

«Մենք՝ ներքստորագրեալ կազմակերպութիւններս, խստօրէն դատապարտում ենք թաթուլ Յակոբեանի նկատմամբ իրականացուող անթոյլատրելի արշաւը եւ զօրակցութիւն ենք յայտնում մեր գործընկերոջը:

«Տեղի ունեցածի առնչութեամբ պահանջում ենք.

«ՀՀ դատախազութիւնից՝ անյապաղ միջոցառումներ ձեռնարկել այս սպառնալիքների արշաւն իրականացնողներին ու նրանց ուղղորդողներին բացառապէս լուր եւ պատասխանատուութեան ենթարկելու համար, մանաւանդ, որ լրագրողը պատրաստ է տալ յստակ անուններ, «Ոստիկանութիւնից՝ Հայաստան ժամանելուն պէս ապահովել թաթուլ Յակոբեանի անվտանգութիւնը:

«Կոչ ենք անում լրագրողական հանրութեանը՝ համերաշխութիւն ցուցաբերել եւ սատարել թաթուլ Յակոբեանին՝ դիմակայելու իր նկատմամբ ձեռնարկուած դատապարտելի գործողութիւններին»:

չմանրամասնեց՝ ե՞րբ ձեռք բերուած է այդ պայմանաւորուածութիւնը, ե՞րբ պիտի սկսին աշխատիլ այս ուղղութեամբ, եւ որո՞նք պիտի ըլլան այդ ներկայացուցիչները: Չառուշողուն նաեւ ընդգծեց, որ այս հարցով որոշումներ ընդունելու ժամանակ խորհրդակցած են Ատրպէյճանի հետ եւ միասին դիւանագիտական ջանքեր կը գործադրեն՝ տարածաշրջանային խաղաղութեան ու կայունութեան հաստատման համար:

Պատասխանելով ընդդիմադիր «Լաւ» կուսակցութեան պատգամաւորի հարցին՝ թուրք նախարարը յատկացուցած է, որ առայժմ խօսք կ'ըլլայ յատուկ ներկայացուցիչներու, ոչ թէ՛ ղեկավարներու նշանակման մասին: Ան նշած է, որ եթէ Հայաստանը դասեր քաղէ վերջին դէպքերէն եւ ընտրութիւն կատարէ յօգուտ խաղաղութեան,

ուրեմն չի բացառուիր նաեւ դեսպանութիւններու բացումը:

Հայաստանի ԱԳ նախարարութիւնը դրական գնահատած է թուրքիոյ արտաքին գործոց նախարարի յայտարարութիւնը եւ հաստատած, որ երկխօսութեան համար յատուկ ներկայացուցիչ կը նշանակուի: Պաշտօնական Երեւանը եւս, սակայն, այլ մանրամասնութիւններ չէ հաղորդած:

Հայ-թրքական սահմանը փակ է Ղարաբաղեան առաջին պատերազմէն՝ 1993 թուականէն, նոյն տարին փակուած էր նաեւ օդային սահմանը, սակայն այն բացուեցաւ 1995-ին: Չնայած 1991-ի Դեկտեմբեր 24-ին թուրքիան պաշտօնապէս ճանաչած է Հայաստանի Հանրապետութիւնը, սակայն երկկողմանի դիւանագիտական յարաբերութիւններ այդպէս ալ չեն ձեւաւորուած:

ՄԱՍԻՍ  
ԱՄՆԵՆԱԿԱՍՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# Ալիեւներու Ընտանիքի Անդամները Դարձեալ Կը Յայտնուին Սկանդալային Բացայայտումներու Սեջ



Ատրպէյճանի նախագահ՝ Իլհամ Ալիև եւ անոր ընտանիքի անդամներն ու մերձաւոր շրջապատը կրկին յայտնուած են քորուփցիոնի հետ կապուած խնդիրի կեդրոնը: Այս անգամ Ալիևներու մասին բացայայտումներ ըրած է բրիտանական վերլուծական Chatham House-ը, որու հետաքննութեամբ ներկայացուած է, թէ ինչպէս նախկին խորհրդային միութեան շարք մը երկիրներու ներկայացուցիչներն ու ռեժիմները գոյք ձեռք բերած են Մեծ Բրիտանիոյ մէջ:

Քորուփցիայի բարձր մակարդակ ունեցող նախկին խորհրդային հանրապետութիւններու սակաւապետներն ու բարձրաստիճան պաշտօնեաները Մեծ Բրիտանիոյ մէջ աւելի քան 2 միլիարդ ֆունտ արժողութեամբ գոյք գնած են:

Հրապարակուած զեկոյցով նշուած է, որ Լոնտոնի եւ Անգլիոյ հարաւ-արեւելքին մէջ, Ատրպէյճանէն, Ղազախստանէն, Ռուսաստանէն եւ այլ մենատիրական երկիրներէն հարուստ վերնախաւերու պատկաններուն գրեթէ հարիւր անշարժ գոյք գնած են:

Յուշակին վրայ իր «պատուաւոր» տեղը գրաւած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիևը՝ ընտանիքի հետ միասին: Ըստ ցուցակին՝ Ատրպէյճանի ներկայացուցիչներուն կը վերագրուի 27 անշարժ գոյք, որոնց մեծ մասը նախագահ Իլհամ Ալիևին ու անոր

կնոջ՝ Մեհրիպան Ալիևա-Փաշաեւայի ընտանիքին կը պատկանի: Ալիև-Փաշաեւ ընտանիքին կը պատկանի շուրջ 14 անուն անշարժ գոյք, որոնց մեծ մասը կը գտնուի Լոնտոն՝ Knightsbridge:

Յուշակին վրայ առկայ միւս անձերը եւս անմիջականօրէն կապուած են Ալիևներու հետ: Մասնաւորապէս, գործարար Աշրաֆ Քամիլովը, որ Ալիևներու ընտանիքի մերձաւորներէն ու անոնց քորուփցիոն, դրամալուստման նախագիծի անմիջական մասնակիցներէն է: Ան նաեւ Ալիևներուն պատկանող Ata Holding-ի ղեկավարն է: Քամիլովը Լոնտոնի մէջ 11 անշարժ գոյք ունի:

Ատրպէյճանի Միջազգային դրամատան նախկին ղեկավար՝ Ճահանկիր Հաճիեւին կը պատկանի երկու անշարժ գոյք: Ընդհանուր առմամբ, Ատրպէյճանցիներուն շուրջ 500 միլիոն ֆունտ արժողութեամբ գոյք կը պատկանի:

Յիշեցնենք, որ աւելի վաղ, միջազգային մէկ այլ հետաքննութեամբ ալ բացայայտուած էր Լոնտոնի Ալիևներու ապօրինի ունեցուածքը: Ըստ «Փանտորայի փաստաթուղթերուն»՝ Ալիևները ցամաքային ընկերութիւններու մեծ ցանց կը կառավարեն, ինչպէս նաեւ Մեծ Բրիտանիոյ մայրաքաղաք Լոնտոնի մէջ ապօրինաբար բազմամիլիոնոց՝ 700 միլիոն տոլար արժողութեամբ անշարժ գոյք ձեռք բերած են:

## «Յանուն ժողովրդավարութեան» Համաժողովը

Շարունակուած էջ 1-էն

թեմը Սպիտակ Տան աշխատակազմի ղեկավար՝ Մարք Մետոզի, կը մերժեն ներկայանալ Յանձնաժողովին առջեւ ու այդ պատճառաւ Ներկայացուցիչներու Տունը իրենց պարագան կ'ուղարկէ Արդարադատութեան Բաժանմունք՝ դատական մեղադրանքի ենթարկուելու համար:

Թրամփի մինչեւ օրս կը մերժէ ընդունիլ իր պարտութիւնը եւ իր համակիրները կը համոզէ, որ ընտրութիւնները կեղծուած են, հակառակ որ բոլոր մակարդակներու դատարանները մերժեցին իր դիմումները փաստերու բացակայութեան պատճառաւ: Հանրապետական մեծամասնութիւն ունեցող նահանգներու մէջ փոփոխութեան կենթարկուին ընտրական օրէնքներն ու կը զծուին ընտրաշրջաններու նոր քարտէսներ՝ նախկին

նախագահի կողմնակիցներուն համար նպաստաւոր պայմաններ ստեղծելու նպատակով:

Ներկայիս շատերու մօտ կայ խիստ մտահոգութիւն, որ Թրամփի յաջորդ նախագահական ընտրութիւններուն պիտի փորձէ գալ իշխանութեան ու այդ նպատակին հասնելու համար պիտի օգտագործէ բոլոր միջոցները՝ երկիրը դնելով քաղաքացիական պատերազմի հեռանկարին առջեւ, որ կրնայ հասցնել Միացեալ Նահանգներու քայքայման ու փլուզման: Քաղաքական մեկնաբաններ ու յօդուածագիրներ բացէ ի բաց կը խօսին մասնաւորապէս հաւանականութիւններու մասին:

Ներկայիս ընթացող գաղտնի լսումներուն պիտի յաջորդեն հեռարձակուող վկայութիւններ, որպէսզի Ամերիկացի ժողովուրդը տեղեկակ ըլլայ թէ, այդ օրերուն ինչպիսի վտանգի առջեւ

# ՀՀ Նախագահը Հանդիպած Է Քաթարի Պետութեան Էմիր, Շէյխ Թամիմ Պըն Համատ Ալ Թանիին Հետ

Աշխատանքային այցով Քաթարի Պետութիւն գտնուող Հայաստանի Հանրապետութեան նախագահ՝ Արմէն Սարգսեան հանդիպած է Քաթարի Պետութեան էմիր, շէյխ Թամիմ Պըն Համատ Ալ Թանիին հետ: Այս մասին յայտնած են ՀՀ նախագահի աշխատակազմէն:

Նշուած է, որ բարի գալուստ մղվելով Հայաստանի նախագահին՝ Քաթարի էմիրը բարձր գնահատած է Հայաստանի եւ Քաթարի միջեւ ձեւաւորուած փոխվստահութեան միջոցով եւ կառուցողական երկխօսութիւնը, ինչպէս նաեւ Հայաստանի նախագահի հետ իր ջերմ յարաբերութիւնները:

Նախագահ Սարգսեան նշած է, որ Հայաստանը հետաքրքրուած է տարբեր ոլորտներու մէջ Ծոցի երկիրներու հետ համագործակցութեան խորացմամբ, եւ այդ շրջագիծին մէջ Քաթար մեր երկրի կարեւոր գործընկերներէն է:

Հայաստանի նախագահը տեղեկութիւններ ներկայացուցած է Հայաստանի իրավիճակի, առկայ մարտահրաւէրներուն, մասնաւորապէս, մարդասիրական խնդիրներու վերաբերելով:

Հայաստանի նախագահն ու

Քաթարի էմիրը ընդգծած են երկու բարեկամ երկիրներու միջեւ փոխգործակցութեան մեծ ներուժը, յարաբերութիւններու ընդլայնման ու ամրապնդման՝ երկուստեք պատրաստակամութիւնը: Անոնք անդրադարձած են նախորդ հանդիպումներու ընթացքին ձեռք բերուած պայմանաւորուածութիւններուն, որոնց իրագործումը դանդաղած էր «Քորոնա» ժահրի համավարակի եւ պատերազմի հետեւանքով, եւ ընդգծած անոնց հարաւորինս արագ կեանքի կոչելու անհրաժեշտութիւնը:

Նախագահ Սարգսեան ըսած է, որ Հայաստան կը ձգտի դառնալ բարձր ճարտարագիտութեան եւ նորարարութիւններու առաջատար երկիր:

Զրուցակիցները նշած են, որ երկու երկիրները կրնան առաջ մղել իրենց յարաբերութիւնները յատկապէս տեղեկատուական ճարտարագիտութիւններու, գիտակրթական նորարարութեան, դրամատանային, զբօսաշրջութեան, կլիմայական փոփոխութիւններու ոլորտներուն մէջ:

Հայաստանի նախագահը եւ Քաթարի էմիրը անդրադարձած են նաեւ տարածաշրջանային հարցերու լայն շրջանակի:

## Հայկ Մարութեանին

Շարունակուած էջ 2-էն

րագմի աւարտից յետոյ Հայկ Մարութեանը Սեյրան Օհանեանի միջնորդութեամբ հանդիպել է Ռոբերտ Քոչարեանի հետ: Ցատկանշական է, որ նրա հետ հանդիպումից յետոյ Մարութեանի նկատմամբ շատ լոյսլ դիրք են գրաւել նաեւ Ռոբերտ Քոչարեանի ենթակայութեան տակ գտնուող լրատուամիջոցները, որոնք նախկինում «օր ու արեւ չէին տալիս» Մարութեանին, եւ նա ամենաշատ քննադատութեան արժանացող պաշտօնեաներից էր իշխող քաղաքական թիմում:

Թերեւս ուշագրաւ է նաեւ այն հանգամանքը, որ 2020 թուականի Արցախեան պատերազմից յետոյ Երեւանի փողոցներում յայտնուեցին Ռոբերտ Քոչարեանի գրքի գովազդային պաստառները:

Կարծես թէ ամէն ինչ գնում է նրան, որ պատերազմից յետոյ «չէզոք» քաղաքական դիրքաւորում որդեգրած Հայկ Մարութեանին ուզում են ներքաշել «լուրջ խաղի մէջ» եւ նրա առաջնորդութեամբ ուժեղ հարուածներ հասցնել գործող իշխանութեանը: Մասնաւորապէս՝ վերլուծելով ՏԻՄ ընտրու-

թիւնների արդիւնքները, որտեղ Ռոբերտ Քոչարեանի ստեղծած «Հայաստան» դաշինքը միտումնաւոր չի առաջադրում թեկնածուներ, սակայն քողարկուած կերպով պաշտպանում է դեռեւս նախկին իշխանութիւնների կողմից մնացած գործող քաղաքացիներին, որոնք սեփական անուն-ազգանուններով դաշինքների ներքոյ որոշ տեղերում յաղթում են իշխանական թեկնածուներին, նախկին իշխանութիւնները իրենց համար յարմար թեկնածու են տեսնում նաեւ Հայկ Մարութեանին գալիք 2023 թուականի Երեւանի ՏԻՄ ընտրութիւններում:

Եթէ մինչ այս կեդրոնական իշխանութիւնները «մի կերպ հանդուրժում էին» Հայկ Մարութեանի ընդունած դիրքը, ապա այս ամէնից յետոյ ակնյայտ է դառնում, որ լուրջ անդունդ է ձեւաւորուում նրան քաղաքապետ դարձած քաղաքական թիմի եւ նրա միջեւ:

Թէ ինչպէ՞ս կ'որոշի Հայկ Մարութեանի յետագայ ճակատագիրը նրան քաղաքապետ դարձած իշխող քաղաքական թիմը, պարզ կը լինի ապագայում:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

կանգնած էր երկիրը:

Դէպքերու յառաջիկայը նթացքը կանխելու համար Գոնկրէսը պարտաւոր է սահմանել ընտրական միատեսակ օրէնքներ, որոնք գործադրելի ըլլան բոլոր նահանգներուն կողմէ: Գոնկրէսը ունի այդ իրաւասութիւնը եւ Դեմոկրատ մեծամասնութիւնը պետք է դիմէ այդ քայլին, Տախ քան որ ուշ ըլլայ: Երկրորդը՝ Յունուար 6-ի Յանձնաժողովի վերջնական եզրակացութեանց ետք, Արդարադատութեան Բաժանմունքը Տանուտ Թրամփին պետք է ենթարկէ քրեական պատասխանատուութեան իր երդումին հակառակ Սահմանադ-

րութիւնը ու օրէնքներ խախտելու եւ յեղաշրջումի փորձ կատարելու մեղադրանքով:

Հակառակ որ, նախկին նախագահներուն դատելու աւանդոյթ չկայ այս երկրէն ներս, սակայն նաեւ Միացեալ Նահանգները չէ ունեցած Թրամփի մասն օրինազանց նախագահ: Ներկայիս կը պահանջուի կտրուկ քայլեր՝ Ամերիկայի ժողովրդավարութիւնը փրկելու համար, այլապէս իմաստ պիտի չունենան այլ երկիրներուն ժողովրդավարութեան դասեր տալու համար կազմակերպուող համաժողովները:

«ՍԱՍԻՍ»



**Արտեմին Նոպելեան Մրցանակի Տուչուֆինը**



**ՍԱՐԳԻՍ ՎԱՐԱԳՆ**

Առանց կեղծ համեստութեան՝ այլ գիտակցուած ազգային հպարտութեամբ գինուած, պատրաստուեցանք, ես ու տիկինս, ներկայ ըլլալու Ըրվայն քաղաքի պատկառազդու Ակադեմիայի սրահներուն մէջ կայացող, մեր գաւկիւն՝ Արտեմին, Նոպելեան մրցանակ-պատուագիրի տուչութեան:

Արդէն յայտարարուած ըլլալով Արտեմին Լիբանանեան միջ-քաղաքացիական պատերազմէն խոյս տալով Ամերիկեան փեր ապաստանած ըլլալու հանգամանքը, չէինք ուզեր գաղթականի այդ որոշ չափով խոնարհ երանգը ընդունած ներկայանալ, այլ շեշտը դնելու համար անոր բարձր մշակույթ կերտած ազգութեան մը որպէս արժանաւոր ժառանգորդը ներկայացնելու վճռական մտադրութեամբ, անտեսելով գոռոզամտութեան ամէն նախապաշարուած, որոշեցի օգնութեան կանչել իմ գրական գոյգ պատուանշաններս, որոնցմով ալ զարդարեցի կուրծքս եւ այդպիսով ալ մոտք գործեցինք Ակադեմիայի շրջաբալէն ներս, ուր արդէն պատկառելի գիտական բազմութիւն մը եռուգեռի մէջ էր: Հոն մեզ դիմաւորեցին Արտեմն ու մեծ գաւակա՝ Արան, իրենց ընտանիքներով հանդերձ: Ա՛լ առանձին չէինք: Արան ալ որպէս համակարգչային գիտութեան առաջատար ջահակիր, իր հարիւրէ աւելի գիւտարարութեամբ իր հռչակն ու շուքը բերած ըլլալով, զգացինք մեն գմեզ աւելի ապահով ու տոկուն կուտանի մէջ:

Ժամը ճիշդ 2,30-ին Արդէն ամբիթէադը սրահին մէջ, երեք հարիւրի մօտ գիտական խաւին պատկանող պատկառելի հասարակութիւն մը ակնդէտ կը սպասէր պատկառներու հանդիսարահ մոտքին:

Եւ ահա հանդսավար Ակադեմիայի նախագահուհի Տիկինը բեմ գալով տուաւ մոտքի ազդանշանը չորս պատկառներուն, որոնց ամենէն երիտասարդն ու կայտառը մեր Արտեմն էր: Սրահը թունդ ծափահարութեամբ ըն-

դունեց անոնց մոտքն ու տեղաւորուած բեմի չորս աթոռներուն: Մինչ այդ, ըստ նախատեսութեան, կը զգայի բազում նայուածքներու ուղղուածութիւնը կուրծքս զարդարող պատուանշաններուն: Յետագային ալ, շատեր մօտեցան ու հարց տուին այդ պատուանշաններու ինքնութեան մասին: Բացատրեցի անոնց միայն գրական գնահատումը, պարզապէս ցոյց տալու համար Արտեմի ծնողքին իրավիճակ մակարդակը:

Մեկ առ մէկ, կենսագրական հակիրճ տուեալներու նշումով, Շուէտի շնորհալի դեսպանուհին, որոտընդոտ ծափահարութիւններու եւ գոչումներու տարափին տակ, պատկառներուն յանձնեց պատուոյ գիրն ու շքանշանը: Ձեռնային հեռաձայններու շրխկոցն ու լոյսը հորիզոնը կ'ելեկտրականացնէին ամբողջութեամբ, իսկ մեր կուրծքերը կ'ալեկոծէին հպարտութեամբ մը, որուն արտայայտուններն զրկուած էինք վերջերս, դարբանեան պարտութեան դժբեմ առիթով: Ու, հետեւաբար, չէի կրնար արգելակէր մտածումս, պարտադիր այն իրողութեան, որ երկու գոյգ եղեռնապուրծ որբերու վերապրումով ծլարձակուած լոկ երկրորդ սերունդն էր այս, որ մէկ ոստումով կը ճառագայթէր համաշխարհային այս փայլատակումին ու պանծացումին: Ա՛յս էր, նաեւ, եւ երախտիքի մեր մեծագույն, հոգեպարար վրիժառութեան իրագործումը: մեզի հոգեպարարը զործադրող բոլոր տեսակի բնաջնջման իմաստներով ինքներուն:

Բայց այս խանդավառութեան մէջ, բնա պիտի չի մոռնանք շնորհակալութեան եւ երախտիքի խօսք ըսելու Ամերիկայի պետութեան, լայնածիր իր ներդրումին եւ ստեղծած բարենպաստ առիթներուն եւ միջոցառումներուն համար, առանց որոնց պիտի չի իրագործուէր այս փառաւոր սիրանքը, որ անգամ մը եւս կը փաստէ, թէ հայ ժողովուրդը ունի հոգեկան եւ մտային այնպիսի ներուժ պաշար, զինք ատակ դարձնելու Նոպելեան գագաթներուն մատչելու եւ նուաճելու:

**Վեր. Յովհաննէս Մելգոնեանի Ծննդեան 90-Ամեակի Հանդիսութեան 90 Հազար Տուարի Նուիրատուութիւն**

**Գ. ՄՈՒՈՅԵԱՆ**

Մեր իրականութեան մէջ շատ հազուադէպ երեւոյթներէն է նշել հոգեւորականի մը ծննդեան 90-ամեակը եւ հրապարակային հանդիսութեամբ մը պանծացնել այդ տարեդարձը:

Արդարեւ, այդպիսի չիշարժան միջոցառում մըն էր, որ տեղի ունեցաւ Ուրբաթ 3 Դեկտեմբեր, 2021ին, Կլենտէյլի Ֆինիչիա ճաշարանին մէջ, ըստ արժանուցն պատուելու վաստակաշատ Վեր. Յովհաննէս Մելգոնեանի ծննդեան 90-րդ տարեդարձը: Կազմակերպիչները՝ կրցան յաջողիլ ամբողջովին եւ կատարեալ գաղտնապահութեամբ, իրականացնել սոյն միջոցառումը, որով՝ ենթական դրան մոտքին, մեծ անակնկալի (սուրբբայց) առջեւ գտնուեցաւ ու յոտնկայց ջերմ ծափահարութիւններով դիմաւորուեցաւ իր գալուտը: Պատուելի Յ. Մելգոնեան, ընկերակցութեամբ իր կնոջ Տիկին Ժանեթ Մելգոնեանի, սեղան առ սեղան շրջայց կատարելով, ողջունեց բոլոր հիւրերն ու հրաւիրեալները:

Շուրջ 125 հոգիներու մէջ կը նշմարուէին Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան գլխաւոր հովիւ Վեր. Հենրիկ Շահնազարեանը, նախկին ընդհանուր հովիւ Վեր. Պերճ ձանպագեանը, ինչպէս նաեւ Հայ Աւետ. Եկեղեցիներու հովիւներ, հոգաբարձուներ եւ տարբեր կազմակերպութեանց ու մասնուի ներկայացուցիչներ:

Ճաշի սպասարկութենէն ետք՝ գործադրուեցաւ օրուան պատշաճ յայտագիր մը, զոր ձեռնհասարէն վարեց Փասատինայի եւ շրջակայքի Հայ Աւետ. «Կիրիկիա» եկեղեցու ժրջան հովիւ Վեր. Սերոբ Մկրտիչեան: Ան իր բացման խօսքին մէջ, ջերմօրէն ողջունեց ներկայ հասարակութիւնը, միաժամանակ դրուատեց յօբելեար պատ. Յովհաննէս Մելգոնեանի աստուածահաճոյ ծառայութիւնները եւ նուիրումը ի սպաս եկեղեցիին եւ հայ համայնքին:

Իրենց սրտի խօսքերով յաջորդաբար ելոյթներ ունեցան Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան նախկին հովիւ Վեր. Պերճ ձանպագեան, Վեր. Տիգրան Շանլեանի պատգամը կարդաց Արա Ասիլեան, Վեր. Սերոբ Մկրտիչեան, Գաբրիէլ Մոլոյեան, Մարի Վարդանեան եւ այլ հրաւիրեալներ, որոնք իրենց դրական արժեւորումը կատարեցին եւ բարձր գնահատելով տասնեակ տարիներու բեղմնաւոր ծառայութիւնը՝ Վեր. Յովհաննէս Մելգոնեանին փոխանցեցին քաջաոգովութեան, յարատեւութեան եւ երջանիկ կեանքի իրենց ջերմ բարեմաղթութիւնները:

Ներկաներն այնուհետեւ մեծ հետաքրքրութեամբ դիտեցին Վեր. Յ. Մելգոնեանի անձնական, կրթական եւ հոգեւոր գործունէութեան վերաբերեալ վաւերագրական եւ շահեկան տեսաներից մը, որ ձեւով մը իր կեանքի համառօտ կենսագրականն էր:

Յօբելեարի կեանքի երկարամեայ կողակիցը՝ Տիկին Ժանէթ

Մելգոնեան յուզումնախառն ելոյթով հանդէս եկաւ եւ դրուատանքով արտայայտուեցաւ Վեր. Յովհաննէս Մելգոնեանի նուիրուածութեան, բարեհոգի անձնաւորութեան եւ նկարագրային դրական գիծերուն մասին, որպէս տիպար ամուսին եւ հայր, որուն ծառայասիրութիւնն ու ազնիւ հոգին գերիվեր է ամէն բանի մէջ:

Մելգոնեաններու շնորհալի դուստրերը՝ Տօրիսը եւ Արտան միասանաբար, շատ հաճելի փոխասացութիւն մը կատարեցին եւ ինքնատիպ ձեւով մը, փոխն ի փոխ, ներկայացուցին իրենց սիրեցեալ հօր շուրջ երեք քառորդ դարու կեանքի ճանապարհը, իր բոլոր երեսներով (դպրոց, գործ, եկեղեցի, ընտանիք, բարեկամներ) ազուցուած լեզուական իւրօրինակ դարձուած քննարկով: Կարծէք գեղարուեստական ասմունք մը ըլլար, որուն նիւթն էր «Մեր Հայրը»...:

Երեկոյի ընթացքին գեղեցիկ մեներգներով հանդէս եկաւ գաղութիւ շնորհալի երգչուհիներէն Մարալ Բարսեղեան: Յայտագրի ընդհանուր տեւողութեան կը լսուէր քնարի քաղցրահնչիւն կենդանի նուագակցութիւն, անանուն արուեստագետի մը կատարմամբ:

90-ամեակի կարկանդակի հատումը տեղի ունեցաւ յատուկ արարողութեամբ եւ ձեռամբ յօբելեար Վեր. Յովհաննէս Մելգոնեանի «Ուրախ տարեդարձ քեզի...»:

Յիշարժան երեկոյի աւարտին շնորհակալական հակիրճ ելոյթով մը հանդէս եկաւ Վեր. Յովհաննէս Մելգոնեան: Ան նախ յուզուած շեշտով շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ իրեն շնորհած բերկրալի երկար տարիներուն համար: Նաեւ շնորհակալութիւն յայտնեց իր ընտանիքի անդամներուն, ներկայ հրաւիրեալներուն, մասնաւորաբար՝ իրենց սրտի խօսքով ելոյթ ունեցողներուն, նաեւ խոստացաւ շարունակել իր աստուածահաճոյ ծառայութիւնը, այնքան ատեն որ կեանք պարգեւուած է իրեն:

Մեծ ծափահարութիւններով ընդունուեցաւ լուր մը, որով Վեր. Յ. Մելգոնեանի 90-ամեակի բարեբաստիկ առիթով իր ընտանիքը կը կատարէ 90 հազար տուարի նուիրատուութիւն մը, հետեւեալ 9 հաստատութիւններուն.

- Հայկազեան Համալսարան - Պէյրութ
- Հայ Աւետարանական Վարժարան - Այնճար
- Հայ Աւետարանական Վարժարան Բեսապ - Սուրիա
- Նիր Իսթ Սքուլ Օֆ Թէօլոլոճի ԱՄՆ-ի Նազովրեցի Աւետարանական Եկեղեցի
- Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Վարժարան
- Շամլեան-Թաթիկեան Հայ Աւետարանական Վարժարան
- Հայ Աւետարանական Եղբայրներու Եկեղեցի
- Հայ Աւետարանական «Կիրիկիա» Եկեղեցի
- Շնորհաւոր 90-ամեակ սիրելի պատուելի, քաջաոգով, երկար եւ երջանիկ տարիներու ամենաջերմ բարեմաղթութիւններով:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**  
**«Մասիս» Շաբաթաթերթին**  
 Masis2@earthlink.net (626) 797-7680

[www.masispost.com](http://www.masispost.com)



## EU's Michel Hosts Talks Between Armenian, Azeri Leaders Brussels



BRUSSELS -- European Council President Charles Michel said the leaders of Armenia and Azerbaijan pledged to de-escalate tensions on the Armenian-Azerbaijani border and restore rail links between the two South Caucasus states during talks hosted by him in Brussels late on Tuesday.

Michel, who heads the European Union's top decision-making body, said Azerbaijani President Ilham Aliyev and Armenian Prime Minister Nikol Pashinyan assured him that they remain committed to honoring relevant agreements brokered by Russia over the past year.

"President Aliyev and Prime Minister Pashinyan agreed that in the context of the planned launch of negotiations on the delimitation and demarcation of the state border between Armenia and Azerbaijan, further tangible steps will need to be taken to reduce tensions on the ground to ensure a conducive atmosphere for the talks," he said in a late-night statement on the trilateral meeting.

The EU is ready to provide "technical assistance" to the demarcation process, added Michel.

Continued on page 4

## Ardem Patapoutian Receives Nobel Prize During Special Ceremony in Irvine

SANDIEGO -- Armenian-American scientist Ardem Patapoutian was awarded the Nobel Prize on Wednesday for helping discover how humans sense temperature and touch, breakthroughs he largely made at La Jolla's elite Scripps Research, The San Diego Union-Tribune reports.

Karin Olofsson, the Swedish ambassador to the United States, conferred an 18-karat gold medal for physiology or medicine on Patapoutian and one on his co-winner, David Julius of UC San Francisco, under circumstances that also were highly unusual.

All Nobel medals and diplomas — except for the ones given in peace — have historically been given in Stockholm, Sweden. But the Nobel Foundation decided — as it did a year ago — to honor the laureates in their home countries due to COVID-19 issues.

The four Western U.S. laureates received their prizes during a brief ceremony at the National Academies' home near UC Irvine. They include Patapoutian and Julius, as well as David Card of UC Berkeley and Guido Imbens of Stanford, who won a Nobel in economics.

Wednesday's ceremonies represented the end of a wild two-month period for Patapoutian, 54, an Armenian-American who fled civil war in



his native Lebanon in 1986 to emigrate to the U.S., where he began his career as a biochemist and later joined Scripps, where he still works.

He had his phone turned off in the hours before dawn on Oct. 4 when the Nobel Committee was trying to reach him to say that he'd won. The committee was able to reach his 94-year-old father, who lives in the Los Angeles area, who then contacted Patapoutian, telling him to call Sweden.

Patapoutian rolled over in bed at his home in Del Mar and told his wife,

Continued on page 3

## "We are Committed to the Consolidation of Democracy in Armenia" Pashinyan Addressing U.S. 'Summit For Democracy'



YEREVAN -- Prime Minister Nikol Pashinyan pledged to consolidate democracy in Armenia on Friday as he addressed a virtual global summit organized by U.S. President Joe Biden.

Pashinyan was among the leaders of more than 100 countries invited to the two-day "Summit for Democracy" which is designed to promote democratic governance around the world in the face of rising authoritarianism.

"Over the last three years, Armenians have chosen democracy over authoritarianism twice. The first time was in 2018, following the non-violent Velvet Revolution, and the subsequent free and fair snap election. The second time was in 2021, following a devastating war. Armenians went to the polls, again, to ensure that we would not return to the ways of the past. Indeed, democracy is a perpetual work

in progress," Pashinyan said in his speech at the summit.

"We are committed to the consolidation of democracy in Armenia through strengthening democratic institutions," Pashinyan stated.

PM Pashinyan concluded his remarks by stating "In our bid to consolidate our democracy, we are facing multiple challenges. The biggest challenge for us comes in the form of military threats to our security. Fighting for democracy at home is yet another challenge. That challenge is compounded when threats arise from beyond our borders. If we are to restore the appeal of democracy throughout the world, we need to join forces to face these challenges together. Armenia is committed to contributing to the global mission of strengthening democracy, and we hope that we are not alone."

## Turkey, Armenia to Appoint Envoys to Normalize Relations, Cavusoglu Claims

Turkey and Armenia have said that they will appoint soon special envoys for bilateral negotiations on normalizing their relations.

Turkish Foreign Minister Mevlut Cavusoglu was the first to announce the planned talks in Turkey's parliament on Monday evening. The special negotiators will be named as part of "steps to normalize relations with Armenia," he said without giving any other details.

Cavusoglu also stressed that Turkey consulted with Azerbaijan before making the decision. "We will be taking every step together with Azerbaijan," he said.

Armenia confirmed and hailed Cavusoglu's statement on Tuesday morning. The Foreign Ministry spokesman, Vahan Hunanian, said "the Armenian side also will appoint a special representative for the dialogue."

"Armenia has always been and remains ready for a process normaliz-



ing relations with Turkey without preconditions," Hunanian said in written comments to the media.

Turkey's surprise overture is in line with a request by President Joe Biden, who urged Turkish President Recep Tayyip Erdogan during an October meeting in Rome to open the

Continued on page 4

## Armenia, France Sign “Roadmap for Economic Cooperation”



PARIS (Armradio) -- Armenia and France have signed the roadmap for economic cooperation for 2021-2026. The document aims at creating a strategy and framework for bilateral economic programs between Armenia and France for the next five years, which will include infrastructure, urban development, energy, agriculture, tourism, innovation, high technology, healthcare and other promising areas.

The first joint sitting of the working group on Armenian-French economic cooperation was held in Paris on December 9. The Armenian delegation was headed by Foreign Minister Ararat Mirzoyan, the French delegation was led by Jean-Baptiste Lemoine, Secretary of State for Foreign Affairs of France.

Minister Mirzoyan thanked Secretary of State Lemoine for his support of warm hospitality and effective

discussions, emphasizing that the joint sitting was the result of nearly a year of bilateral follow-up work, efforts at the level of the two countries' leaders, and agreements reached.

Ararat Mirzoyan stressed the need to work consistently to implement the agreements reached by the top leadership of the two countries to intensify economic relations, which will correspond to the level of privileged relations between Armenia and France.

